

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՆԱՌԱ ՍՏԱՖԻԿԻ ԶԱՆՈՅԱՆ**

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԴՊՐՈՑՈՒՄ**

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2014**

**Ատենախոսության թեման հաստատվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում:**

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր **Ռ. Ա. Մարդոյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր՝ **Ի. Կ. Կարապետյան**  
մանկավարժական գիտությունների թեկնածու՝ **Ա. Ա. Աշիկյան**

Առաջատար կազմակերպություն **Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. դեկտեմբերի 12-ին ժամը 14<sup>00</sup> -ին ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. նոյեմբերի 11-ին:

**Մանկավարժության 065 մասնագիտական**

**խորհրդի գիտական քարտուղար**

**մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝**



**Ա. Փ. Ղազարյան**

## ԱՅԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Մեր երկրում հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունների, վերակառուցումների պայմաններում այսօր անհրաժեշտ է դարձել երեխաներին առավել ճիշտ, հատուկ կազմակերպված կերպով նախապատրաստել հասարակական լիարժեք կյանքին, արդյունավետ աշխատանքային գործունեությանը և օգնել նրանց կատարելու գիտակցական, հիմնավորված մասնագիտական ճիշտ ընտրություն:

Հանրակրթության ոլորտում ընթացող բարեփոխումներն այսօր ուղղված են ողջ հասարակության զարգացմանը, համաշխարհայնացման /գլոբալացման/ պայմաններում հասակարության այն անդամի ձևավորմանը, որը կարող է արագ կողմնորոշվել կյանքի դժվարին և փոփոխվող պայմաններում, կարող է նպաստել տվյալ երկրի գիտության, տնտեսության և այլ ոլորտների զարգացմանը: Անշուշտ հանրակրթության ոլորտում ընթացող բարեփոխումների արդյունքում շոշափվում են կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, որտեղ ընդգծվում են սովորողների մոտ նոր գիտելիքների ձեռքբերման ձգտումները, գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական նորամուծությունների ընթացման որակները, սովորողների մասնագիտության ընտրության, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը: Այսինքն, այսօր աշխատանքի ընտրության, ապագա մասնագիտական գործունեության վերաբերյալ փոփոխվել են մոտեցումները, ձևերն ու միջոցները, որի արդյունքում սովորողները պետք է ավելի ակտիվ մասնակցություն ունենան իրենց մասնագիտական կողմնորոշման, մասնագիտության ընտրության, աշխատանքային գործունեության հարցերում:

Կրթության հումանացումը, աշխատաշուկայում բարձր մրցակցությունը, դրանցով պայմանավորված հասարակական զարգացումները պահանջում են դպրոցականների մասնագիտական կողմնորոշման համակարգի կատարելագործում և անձի լիարժեք ու հաջող ինքնաիրացում:

Այս ամենը հանրակրթական դպրոցի առաջ սկզբունքորեն նոր մանկավարժափոզբանական մոտեցումների որոնման և մշակման խնդիր է դնում: Դպրոցում սովորողներները պետք է ընդունակ լինեն անելու մասնագիտական ճիշտ ընտրություն, հասարակական պահանջների և սեփական հետաքրքրությունների, անհատական առանձնահատկությունների համատեղման հիման վրա, որպեսզի սոցիալ-տնտեսական վերակառուցումների իրական պայմաններում կարողանան հասնել

մասնագիտական ինքնաիրացման: Այդ առումով սովորողների մասնագիտական կողմնորոշման համակարգը, որի գլխավոր նպատակը հասարակության պահանջներին և անձի հետաքրքրություններին համապատասխան մասնագիտության ճիշտ, գիտակցական ընտրության ապահովումն է, էական ազդեցություն կունենա ինչպես աշխատանքային միջոցների արդյունավետ բաշխման, սովորողների կողմից կյանքի ուղու ընտրության, մասնագիտությանը նրանց հարմարման գործընթացների, այնպես էլ մասնագիտական կողմնորոշում իրականացնող բոլոր սոցիալական ինստիտուտների կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետության վրա:

Կարգերի մասնագիտական պատրաստվածության նկատմամբ ժամանակակից պահանջների աճն ավելի է արդիականացնում սովորողների մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրը դպրոցում: Այդ խնդիրն առավել կարևոր նշանակություն է ստանում ավագ դպրոցում, քանի որ ավագ դպրոցում առավել հրատապ է դառնում մասնագիտության ճիշտ ընտրության հարցը, մասնագիտության գիտակցված ընտրությունը, սովորողների կողմնորոշվածությանն ուղղված աշխատանքների նշանակությունը, մեծանում է այլ սոցիալական ինստիտուտների դերն ու ակտիվությունը: Հետևաբար կարևորվում է մասնագետ-մանկավարժների կողմից իրականացվող աշխատանքների անհրաժեշտությունը, տարբեր խորհրդատվությունների, տեղեկատվությունների տրամադրումը:

Ժամանակակից ավագ դպրոցում, ինչպես նշել է Ա. Դ. Սազոնովան իր հետազոտություններում, մասնագիտական կողմնորոշման համակարգը կոչված է ապահովելու պետական մարմինների, դպրոցի, ընտանիքի, մասնագիտական-տեխնիկական, միջնակարգ, հատուկ, բարձրագույն կրթության մարմինների և այլ սոցիալական ինստիտուտների գործունեությունների միջև կապը: Այս տեսանկյունից կարևորվում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համակարգման, կառավարման անհրաժեշտությունն ավագ դպրոցում:

Մասնագիտական կողմնորոշման հիմնախնդրի ուսումնասիրությունն ավագ դպրոցում պայմանավորված է նաև առկա հակասություններով. հասարակության օբյեկտիվ պահանջների և սովորողների՝ մասնագիտական ձգտումների միջև:

Թեմայի արդիականությունը պայմանավորող հաջորդ խնդիրը ՀՀ-ում աշխատաշուկայի և մասնագիտական կրթության արդյունքի միջև անհամապատասխանությունն է: Դպրոցականների հիմնական մասը մասնագիտության գիտակցված ընտրություն չի կատարում: Հետևանքները ողջ հասարակության և առանձին անձի մակարդակում դառնում են խնդրահարույց. ավելանում է գործազուրկների, դրա

արդյունքում արտագաղթողների թվաքանակը, գրանցվում է տարբեր մասնագիտությունների գծով կադրերի «ծերացում»:

Ժամանակակից աշխարհում փոխվել են նաև աշխատատեղի որոնման պայմանները, հնարավորությունները, աշխատողի անձնային որակներին ներկայացվող պահանջները: Աշխատատեղ գտնելու համար կարևորվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են նախաձեռնողականությունը, հարմարվողականությունը, ձկունությունը, համագործակցելու, իրավիճակը ճիշտ գնահատելու և դրան համապատասխան վարքագիծ դրսևորելու կարողությունները: Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում այդ հարցերին ևս պետք է ուշադրություն դարձնել:

Ատենախոսությունում առաջադրված խնդիրը կարևորվում է նաև նրանով, որ ՀՀ-ում ավագ դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշման համակարգի, նրա արդյունավետության, ժամանակակից մասնագիտությունների սովորողների իրազեկվածության մասին մանկավարժական գիտության մեջ համակարգված, համապարփակ հետազոտություններ գրեթե իրականացված չեն, չկա նաև ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համալիր ծրագիր, որի իրականացման արդյունքում աշակերտները կծանոթանան գոյություն ունեցող մասնագիտություններին, դրանց առանձնահատկություններին ու ներկայացվող պահանջներին, աշխատաշուկայի և հասարակության պահանջներին, կբացահայտվեն սովորողների անհատական առանձնահատկություններն ու հետաքրքրությունները, որոնք կօգնեն մասնագիտության ճիշտ ընտրության հարցում, սովորողների մոտ կծնավորվեն մասնագիտական գործունեության մեջ հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ կարողություններ, որակներ, արժեքներ:

**Հետազոտության նպատակը** ավագ դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշման հիմնախնդրի ուսումնասիրումը և դրա լուծման ուղիների առաջադրումն ու հիմնավորումն է:

**Հետազոտության օբյեկտը** ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացն է ժամանակակից դպրոցում:

**Հետազոտության առարկան** ժամանակակից դպրոցում ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացի իրականացման մանկավարժական ուղիներն են:

**Հետազոտության վարկածը** ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման գործընթացի արդյունավետ զարգացումը հնարավոր է, եթե.

1. Գիտականորեն ուսումնասիրվեն ավագ դպրոցում

մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա խնդիրները,

2. Ավագ դպրոցում համալիր կիրառվեն մասնագիտական կողմնորոշման բաղադրիչները,

3. Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշումն իրականացվի սովորողների մանկավարժահոգեբանական ախտորոշման տվյալների հիման վրա,

4. Ակտիվացվի դպրոց-ընտանիք համագործակցությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում,

5. Գործատուները ներգրավվեն ավագ դպրոցի մասնագիտական կողմնորոշման գործընթացներում,

6. Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման նպատակով պատրաստվեն այդ ոլորտի համար համապատասխան մասնագիտական կադրեր, ստեղծվեն կենտրոններ, որոնք կապահովեն խորհրդատվություն,

7. Մշակվի ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համալիր ծրագիր,

8. «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացը ներառվի մանկավարժական բուհերի տարբեր մասնագիտությունների ուսումնական պլաններում, որը կնպաստի ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացմանը:

**Հետազոտության խնդիրները**

1. Վերլուծել և առանձնացնել այն գաղափարներն ու տեսությունները, որոնք նպաստել են մասնագիտական կողմնորոշման ձևավորմանն ու զարգացմանը:

2. Առանձնացնել և բնութագրել մասնագիտական կողմնորոշման համակարգի բաղադրամասերը:

3. Հիմնավորել մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար հատուկ սկզբունքների, մեթոդների և ձևերի անհրաժեշտությունը:

4. Ուսումնասիրել և վերլուծել սովորողների դերը մասնագիտական աշխատանքների կառավարման համակարգում:

5. Բացահայտել և հիմնավորել մասնագիտական կողմնորոշման համակարգում դպրոց-ընտանիք, դպրոց-գործատու համագործակցության դերը:

6. Ուսումնասիրել դեռահասների, ավագ դպրոցականների տարիքային, անհատական առանձնահատկությունները և դրանց դերը մասնագիտության ընտրության հարցում:

7. Սոցիոլոգիական հարցման միջոցով ցույց տալ դպրոցի մանկավարժների և աշակերտների գիտելիքների իմացությունը, իրազեկվածությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքների

համակարգի մասին, վերլուծել, հիմնավորել ստացված արդյունքները և որանց հիման վրա անել առաջարկություններ:

**Հետազոտության գիտական նորույթ.**

1. Ուսումնասիրվել և վերլուծվել են մասնագիտական կողմնորոշման հիմնական գաղափարները, տեսությունները, հասկացությունները:

2. Ուսումնասիրվել են մասնագիտական կողմնորոշման տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտականորեն հիմնավորված են մասնագիտական կողմնորոշման համակարգի բաղադրամասերը:

3. Առանձնացված են գոյություն ունեցող այն հիմնախնդիրները, որոնք պահանջում են լուծումներ մասնագիտական կողմնորոշման գործընթացի հետագա զարգացման համար:

4. Առանձնացված և հիմնավորված են մասնագիտական կողմնորոշման գործընթացին բնորոշ սկզբունքները, մեթոդներն ու ձևերը:

5. Բացահայտված և հիմնավորված է սովորողների դերը մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կառավարման գործընթացում:

6. Վերլուծված և հիմնավորված է դպրոց-ընտանիք, դպրոց-գործատու համագործակցության նշանակությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համակարգում:

7. Անցկացված են սոցիարցումներ ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրների բացահայտման, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպման առկա մակարդակի, ընթացքի, ինչպես նաև առկա հիմնախնդիրների լուծման ուղիների առաջադրման նպատակով:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքերը:**

Հետազոտության որպես մեթոդաբանական հիմք են հանդիսացել մասնագիտական կողմնորոշման խնդիրների լուծման նկատմամբ համակարգային մոտեցումը (Զախարով Ն.Ն, Սազանով Ա.Դ., Սիմոնենկո Վ.Դ և այլոք), անձնակողմնորոշիչ մոտեցումը, որը դիտարկում է տարիքային առանձնահատկությունների փոխկապվածությունը դեռահասի մասնագիտության ընտրության հետ (Բոժովիչ Լ.Ս., Վորոբյովա Ա.Ի., Կոն Ի.Ս., Նեմով Ռ.Ս., Օբուխովա Լ.Ֆ., Պետրովսկի Վ.Ա., Ֆելդշտեյն Դ.Ի. և այլոք), մասնագիտական կողմնորոշման նկատմամբ սոցիալ-տնտեսական, տեսական և գիտական մոտեցումները (Կալուզին Ն.Ի., Մակսիմով Վ.Գ., Սազանով Ա.Դ., Սիմոնենկո Վ.Դ., Շացկի Ս.Տ.) փուլային-մակարդակային մոտեցումը երեխայի դրդապատճառային համակարգի և մասնագիտական կողմնորոշման դրդապատճառների ձևավորման նկատմամբ (Ախմետովա Գ.Վ., Լեոնտև Ա. Ն., Մակսիմով Վ.Գ., Մուդրիկ Ա.Վ., Նեմով Ռ.Ս., Պավլյուտենկով Ե.Ս., Ռեան Ա.Ա. և այլոք):

**Պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները**

1. Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման արդյունավետությունը հնարավոր է նրա բոլոր բաղադրիչների համալիր կիրառման արդյունքում:

2. Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացմանը նպաստում է ավագ դպրոց-գործատու համագործակցության ձևավորումն ու զարգացումը, գործատուների ակտիվ ներգրավումը մանկավարժական գործընթացում:

3. Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետության բարձրացման կարևոր պայման է մանկավարժահոգեբանական ախտորոշման հաշվառումը:

4. Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացումը պայմանավորված է գործիմաց մասնագիտական կադրերի պատրաստմամբ, նրանց որակավորման շարունակական բարձրացմամբ և հատուկ ծրագրի մշակմամբ:

5. «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի ներառումը մանկավարժական բուհերի տարբեր մասնագիտությունների ուսումնական պլաններում կնպաստի ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացմանը:

**Հետազոտության տեսական նշանակությունը** պայմանավորված է մանկավարժության գիտության տեսական զարգացմամբ, ավագ դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշման գործընթացի նպատակի, խնդիրների, բովանդակության, սկզբունքների, բաղադրամասերի նկատմամբ նորովի մոտեցումներով, որոնք արժեքավոր են մանկավարժական գիտության հետագա զարգացման տեսանկյունից:

**Հետազոտության գործնական նշանակությունը:** Հետազոտության տեսական դրույթները, արդյունքներն ու եզրահանգումները կարող են ուսումնական նյութ հանդիսանալ ուսումնական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների համար, որոնք կօգտագործվեն մանկավարժների և այլ մասնագետների մասնագիտական կողմնորոշման հարցերով վերապատրաստումների, պրակտիկ գործունեության և հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում:

Առաջարկված համալիր ծրագիրը՝ ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման աշխատանքների վերաբերյալ, կարող է արդյունավետ օգտագործվել ավագ դպրոցում տարբեր մասնագետների կողմից:

Հետազոտական աշխատանքն օգտակար է նաև ծնողների, սովորողների և գործատուների համար:



**Հետազոտության մեթոդները**

▪ Փիլիսոփայական, մանկավարժական և հոգեբանական գրականության վերլուծություն, համեմատություն և համադրություն:

▪ Սոցիոլոգիական հարցում, հարցազրույցներ, դիտումներ, անկետավորում:

▪ Հետազոտության արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական մշակում և վերլուծություն:

**Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն** ապահովված են հետազոտված համակազմի որոշակի քանակակազմով /270/, հետազոտության ժամանակակից մեթոդների կիրառմամբ, փաստացի արդյունքների մանրամասն մշակմամբ, վերլուծությամբ:

Հետազոտության տեսական ու գործնական դրույթների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են նաև հրատարակված հոդվածների քանակով, հետազոտության արդյունքների քննարկումներով ու ելույթներով:

**Հետազոտության կատարման փուլերը:**

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

**Առաջին փուլում (2010-2011թթ.)** ուսումնասիրվել և տեսականորեն վերլուծվել է գիտական գրականություն տվյալ հիմնախնդրի վերաբերյալ, մշակվել են ընդհանուր մոտեցումները հետազոտության հիմնախնդրի լուծման վերաբերյալ, որոնք թույլ են տվել հիմնավորել գիտական վարկածը:

**Երկրորդ փուլում (2011-2012թթ.)** հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ իրականացվել է տեսական և էմպիրիկ նյութի համակարգում և ամփոփում, անցկացվել է սոցիալաբանությունը ավագ դպրոցի մանկավարժների և սովորողների շրջանում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համակարգի գիտելիքների իմացության և իրագեղվածության մասին: Վերլուծվել են սոցիալաբանության արդյունքները և դրանց ամփոփման հիման վրա կազմվել են գծապատկերներ:

**Երրորդ փուլում (2012-2014թթ.)** ուսումնասիրությունների և սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծության և ընդհանրացման հիման վրա աշխատանքի շարադրում:

Հետազոտության արդյունքները և եզրակացությունները ներկայացվել և քննարկվել են Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի գիտատեսական սեմինարներում, գիտաժողովներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:**

Ատենախոսությունը բաղկացած է համակարգչային 170 էջից: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածության** մեջ հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, մատնանշվել են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական ու գործնական նշանակությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը, հետազոտության կատարման փուլերը, արդյունքներն ու եզրակացությունները, ծավալն ու կառուցվածքը:

**Ատենախոսության առաջին գլուխը՝ «Մասնագիտական կողմնորոշման գիտատեսական հիմունքները և կառուցվածքը»,** ունի երեք ենթազլուխ:

**Առաջին՝ «Մասնագիտական կողմնորոշման ձևավորումն ու զարգացումը» ենթազլուխում՝** ներկայացվել են մասնագիտական կողմնորոշման խնդրի վերաբերյալ կատարված գիտամանկավարժական աշխատանքների ուսումնասիրությունները, մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացմանն էականորեն խոչընդոտող հանգամանքները, մասնագիտության ընտրության գործոնները, պայմանները: Ներկայացված են նաև այն գործոնները, որոնք ազդում են մասնագիտական ինքնորոշման վրա:

**Երկրորդ ենթազլուխում՝ «Մասնագիտական կողմնորոշման տեսական և մեթոդաբանական հիմունքները»** մեկնաբանվել են «մասնագիտական կողմնորոշում» հասկացության տարբեր սահմանումները, ներկայացվել են հիմնադրույթային գաղափարներ, մասնագիտական կողմնորոշման համակարգին վերաբերող էլակետային դրույթներ, մեթոդաբանական խնդիրներ: Առանձնացվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքների հիմնական ուղղությունները. մասնագիտական լուսավորում, նախնական մասնագիտական ախտորոշում, մասնագիտական խորհրդատվություն, մասնագիտական ընտրություն, սոցիալ-մասնագիտական հարմարում, մասնագիտական դաստիարակություն:

**Երրորդ «Մասնագիտական կողմնորոշման համակարգի բաղադրամասերի բնութագիրը»** ենթազլուխում բացահայտվել և վերլուծվել են մասնագիտական կողմնորոշման յուրաքանչյուր բաղադրամասի դերն ու նշանակությունը, առանձնահատկությունները: Այս ենթազլուխում

ուսումնասիրվել են նաև մասնագիտական կողմնորոշման համակարգի առանձին բաղադրամասերին վերաբերող գործընթացները, դրանց կառուցվածքը:

**Ատենախոսության երկրորդ գլուխը, կրում է «Մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգը հանրակրթական դպրոցում» խորագիրը, որը բաղկացած է երեք ենթագլխից:**

**Առաջին՝ «Հանրակրթական դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքի կազմակերպման և ղեկավարման նպատակը, խնդիրները, սկզբունքները, մեթոդներն ու ձևերը»** ենթագլխում վերլուծվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգը դպրոցում, այդ համակարգում առանձնացվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքի նպատակները տարրական, հիմնական և ավագ դպրոցներում: Համապատասխան այդ նպատակների առանձնացվել են մասնագիտական կողմնորոշման մակարդակները, խնդիրները, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ոլորտները: Վերլուծվել են մանկավարժական մի շարք սկզբունքներ և բացահայտվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում կիրառվող առանձնահատուկ սկզբունքները: Դասակարգվել են մասնագիտական կողմնորոշման մեթոդները, ներկայացվել են աշխատանքի բազմազան ձևեր, առաջադրվել է մասնագիտական կողմնորոշման աշխատանքային ստեղծման անհրաժեշտությունը:

**Երկրորդ՝ «Սովորողների դերը մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կառավարման համակարգում»** ենթագլխում մասնագիտական կողմնորոշման կառավարման համակարգում սովորողների դերի բացահայտման, վերլուծման նպատակով ուսումնասիրվել են սովորողների մասնագիտական ինքնագիտակցության, ինքնորոշման գործընթացները, դրանց առանձնահատկությունները, ընտրվել և հիմնավորվել են մի շարք ցուցանիշներ, որոնք մասնագիտական ինքնորոշումը բնութագրում են մասնագիտական կողմնորոշող աշխատանքի հիմնական չափանիշ:

**Երրորդ «Մասնագիտական կողմնորոշման համակարգում դպրոց-ընտանիք, դպրոց-գործատու համագործակցությունը»** ենթագլխում բացահայտվել է ընտանիքի դերը մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ կատարվող աշխատանքներում, ներկայացված են այն խնդիրները, որոնք լուծում են ծնողները, ներկայացված են այն համադպրոցական միջոցառումները, որտեղ ընդգրկված են նրանք: Բացահայտվել են գործատուների հետ դպրոցի համագործակցության ուղիներն ու ձևերը և հիմնավորվել են ընտանիք- դպրոց, գործատու - դպրոց համագործակցության անհրաժեշտությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում:

**Ատենախոսության երրորդ՝ «Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները դպրոցականների հետ»** գլուխը կազմված է չորս ենթաազլխից:

**Առաջին՝ «Մասնագիտական կողմնորոշման աշխատանքը դեռահասների հետ»** ենթաազլխում ուսումնասիրվել են տարբեր դասարաններում սովորող դեռահասների հետ տարվող մասնագիտակողմնորոշիչ աշխատանքների տեսակները և ուղղությունները, այդ աշխատանքներում կարևորելով դեռահասության տարիքին բնորոշ առանձնահատկությունները, մասնագիտական ինքնագիտակցման զարգացումը, բացահայտվել են մասնագիտության ընտրության արդյունավետության պայմանները դեռահասների հետ աշխատանքում:

**Երկրորդ՝ «Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները ավագ դպրոցում»** ենթաազլխում բացահայտվել են ավագ դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշման խնդիրները. ուսումնասիրվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքների հետևյալ չորս ուղղությունները՝ մասնագիտական լուսավորում, մասնագիտական խորհրդատվություն, մասնագիտական հարմարում և մասնագիտական փորձ: Վերլուծվել են ավագ դպրոցականների մոտ նպատակասլացության և ինքնորոշման դրդապատճառների ձևավորման հարցերը, քանի որ ավագ դպրոցում առավել հստակ պետք է ձևակերպվեն մասնագիտական ընտրության նպատակները և դրանց համապատասխան իրականացնել պլանավորված, կազմակերպված գործընթացներ:

**Երրորդ ենթաազլխը** հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունն է:

Ժամանակակից դպրոցում ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրների բացահայտման, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպման առկա մակարդակի, ընթացքի, ինչպես նաև առկա հիմնախնդիրների լուծման ուղիների առաջադրման և հիմնավորման նպատակով անցկացվել են սոցիոլոգիական հարցումներ: Հարցմանը մասնակցել են ավագ դպրոցի մանկավարժները /տնօրեն, փոխտնօրեն, մասնագետ մանկավարժներ/ և ավագ դպրոցում սովորողները, թվով 270 հարցվողներ: Երկու խմբերի համար մշակվել են առանձին հարցաթերթիկներ, որտեղ սկզբնամասում տվել ենք մասնագիտական կողմնորոշման էությունը:

Մանկավարժների համար նախատեսված հարցաթերթի հարցերն հիմնականում ուղղված են ավագ դպրոցում ընթացող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպմանն ու կառուցվածքին:

Ավագ դպրոցում սովորողների համար նախատեսված հարցաթերթի հարցերն ուղղված են նրանց կողմից մասնագիտության ընտրության գործընթացին, դրա առանձին կողմերին:

Անցկացված հետազոտությունը թույլ է տվել որոշել, թե ինչքանով կարևոր է մասնագիտական կողմնորոշումն ավագ դպրոցում, բացահայտել խնդիրները, առաջարկել դրանց լուծման ուղիները:

Որպեսզի մեր եզրահանգումները լինեն ավելի ամբողջական, մենք անցկացրել ենք նաև դիտարկումներ, զրույցներ, տարբեր մանկավարժական իրավիճակների վերլուծություններ:

Հետազոտություններն անցկացվել են Երևանի Հ. Գալստյանի անվան թիվ 83 ավագ դպրոցում, Գյումրու թիվ 37, 1, 3, 45, 2, 42, դպրոցներում, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի հենակետային վարժարանում, թիվ 12 մշակութային վարժարանում, Արթիկի թիվ 7, 3 դպրոցներում, ընդհանուր թվով 120 մանկավարժներ և 150 աշակերտներ:


Ստորև ներկայացված են սոցիոլոգիական հարցումների հարցերից մի քանիսը և հարցմանը մասնակցած մանկավարժների ու ավագ դպրոցականների պատասխանները և ստացված արդյունքների վերլուծությունները:

#### Հարցում մանկավարժների շրջանում:

Հարց 1. «Ի՞նչ է մասնագիտական կողմնորոշումը»: Այս հարցը ուղղակիորեն կապված է մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման հետ, քանի որ իմանալ ի՞նչ է մասնագիտական ընտրությունը, նշանակում է ընդգրկված լինել այդ գործընթացներում:

Պատասխանների արդյունքները ներկայացված են գծապատկեր 1-ում:


**Գծապատկեր 1.**  
**Ի՞նչ է մասնագիտական կողմնորոշումը**



Այստեղ մտահոգիչ է այն փաստը, որ հարցվողների մոտ 26 %-ը չգիտի, թե ինչ է մասնագիտական կողմնորոշումը և չի պատասխանել այդ հարցին, մինչդեռ նրանց օգնությամբ են լուծվելու մասնագիտական կողմնորոշման խնդիրները: Սակայն պետք է նշել, որ այնուամենայնիվ հարցվողների մեծամասնությունը՝ 82 մանկավարժ /68%/ կարողացել է ներկայացնել մասնագիտական կողմնորոշման որոշ կողմերը: Մինչդեռ այդ մանկավարժները պետք է իրականացնեն մասնագիտական կողմնորոշման աշխատանքները: Իրենց չիմացությունն ու ոչ իրազեկվածությունը պայմանավորված են այն հանգամանքով, որ նրանք բուհում չեն ստացել հատուկ գիտելիքներ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ, իսկ աշխատանքի ընթացքում չեն անցել համապատասխան վերապատրաստումներ: Այդ մանկավարժների հետ մասնագիտական կողմնորոշման հարցերով անհրաժեշտ է որոշ աշխատանքներ իրականացնել:

Հարց 2. «Ներկայացրեք ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ձևերը»: Այս հարցի պատասխանները շատ կարևոր են մասնագիտական կողմնորոշման գործընթացի իրականացման համար: Հարցման արդյունքները ներկայացված են գծապատկեր 2-ում:

**Գծապատկեր 2.**  
**Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ձևերը»**



Արդյունքները վկայում են այն մասին, որ հարցվողների առավել մեծամասնությունը՝ 89 հարցվող /74%/ հիմնականում ճիշտ է պատասխանել և ընդհանուր առմամբ, տիրապետում է ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքի ձևերին: Սա խոսում է այն մասին, որ ավագ դպրոցում մանկավարժներն այնուամենայնիվ ծանոթ են նշված գործընթացներին, ավելին, նրանք իրականացնում են որոշակի աշխատանքներ, որոնք ուղղված են մասնագիտական կողմնորոշմանը:

Նրանք ճիշտ են պատասխանել, կարծում ենք այն պատճառով, քանի որ մասնագիտական կողմնորոշման հիմնական ձևերը բնորոշ են արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին:

Հարցվողներից 15-ը /12%-ը չի պատասխանել և չգիտի այս հարցի մասին: Կարծում ենք հիմնականում այն պատճառով, որ իրենք ծանոթ չեն մասնագիտական կողմնորոշման հարցերի տեսությանը:

Այսպիսով, մանկավարժների շրջանում մեր կողմից անցկացված հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ նրանք բուհում չեն անցել մասնագիտական կողմնորոշմանը վերաբերող դասընթացներ, հիմնականում չեն կարողանում պատասխանել, թե ի՞նչ է մասնագիտական կողմնորոշումը: Զարմանալիորեն ավելի շատ տեղեկացված են մասնագիտական կողմնորոշման ձևերի ու մեթոդների մասին, որոնցից շատերին ծանոթ էին մանկավարժական գործընթացի իրականացման ընթացքում: Սակայն, երբ խոսքը գնում է մասնագիտական կողմնորոշմանը բնորոշ մեթոդների և ձևերի մասին, շատերը տեղյակ չեն: Մինչդեռ մանկավարժները պետք է քաջ տեղյակ լինեն մասնագիտական կողմնորոշման նպատակի և էության հետ, որպեսզի ճիշտ և արդյունավետ կազմակերպեն մասնագիտական կողմնորոշման աշխատանքներն ավագ դպրոցում:


Սոցիալական արդյունքում եկանք այն եզրահանգմանը, որ մանկավարժները, որոնց գործունեության հիմնական նպատակներից մեկն է կազմակերպել և անցկացնել մասնագիտական կողմնորոշում, փաստորեն հիմնականում ծանոթ չեն մասնագիտական կողմնորոշման աշխատանքների նպատակի ու էության հետ:

#### **Հարցում սովորողների շրջանում:**

Հարց 3. «Ի՞նչ մասնագիտություն եք ընտրել»: Այս հարցի միջոցով փորձել ենք պարզել թե ավագ դպրոցում սովորողներն ի՞նչ մասնագիտություններ են ընտրել:

Վերոնշյալ հարցի պատասխաններից պարզվում է, որ կան գերադասելի մասնագիտություններ, որոնք համընկնում են ավագ դպրոցի բոլոր երեք՝ 10,11,12-րդ դասարաններում: Դրանք են. իրավաբանի, տնտեսագետի, ծրագրավորողի, ֆիզիկ-մաթեմատիկի, բժշկի մասնագիտությունները: Կարծում ենք այս ընտրությունը հիմնականում պայմանավորված է հասարակության մեջ մասնագիտության վարկանիշով, աշխատաշուկայի պահանջով, բարձր վարձատրությամբ և այլն: Այնուամենայնիվ ըստ դասարանների այստեղ ընդգծված տարբերություններ չկան: Նշենք, որ մասնագիտություններն առանձնացրել և միավորել ենք ըստ նրանց կողմից տրված պատասխանների, որոնք ներկայացված են գծապատկեր 3-ում:


**Գծապատկեր 3.  
Ի՞նչ մասնագիտություն եք ընտրել**



Հարց 4. «Ինչպե՞ս եք կատարել մասնագիտության Ձեր ընտրությունը»: Այս հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե ինչ հիմունքներով են ավագ դպրոցականներն ընտրել այդ մասնագիտությունները:

Այս հարցի պատասխանների վերլուծությունները ներկայացված են գծապատկեր 4-ում:

**Գծապատկեր 4  
Ինչպե՞ս եք կատարել մասնագիտության Ձեր ընտրությունը**



Պարզվում է, այստեղ սովորողները կարևորում են ծնողների դերը,



նրանց ցանկությունները, մասնագիտության տարածվածությունը և ընդունվածությունը հասարակության մեջ, բարձր սոցիալական դիրք ունենալու ծագումը, ինչը նրանց կտա ընտրած մասնագիտությամբ աշխատանքը: Սակայն քիչ են հաշվի առնում իրենց սեփական ցանկությունները, հետաքրքրությունները, առողջական վիճակը: Հարցվողներից միայն 17-ն են ինքնուրույն ընտրություն կատարել, իսկ 13 սովորող այն ընտրել է առանց որևէ պատճառի, փոքր թիվ են կազմում ընկերների հետ արված ընտրությունը, դրանք 4-են: Ուշագրավ է այն, որ գրավոր հարցման ընթացքում մեծ թիվ չեն կազմում, բարձր վաստակելու ցանկություն ունեցողները նրանք 6-են, մինչդեռ բանավոր գրույցներում այդ փաստն առավել շեշտադրվում էր: Այստեղ առանձնանում են պատասխաններ, որոնք 11,12 դասարաններում սովորողների մոտ նույնական են: Օրինակ. հարցաթերթի 4-րդ հարցի 9-րդ կետի պատասխանները, երբ մասնագիտության ընտրությունն արվում է հասարակության մեջ բարձր դիրք գրավելու առումով: Կան ընդգծված տարբերություններ ևս: Օրինակ հարցաթերթի 4-րդ հարցի 10 կետի պատասխանները: Այն հարցին, թե ինչպե՞ս են կատարել մասնագիտության իրենց ընտրությունը 11-րդ դասարանում, 50 հարցվողներից 44 - ն է պատասխանել, որից միայն մեկն է նշել «չգիտեմ, հենց այնպես» պատասխանը, մինչդեռ 12-րդ դասարանում 50 հարցվողներից 48-ն է պատասխանել, որից 8-ն են նշել «չգիտեմ, հենց այնպես» պատասխանը:

Կարծում ենք սա խոսում է այն մասին, որ 11-րդ դասարանում սովորողներին թվում է, որ նրանք ունեն հիմնավորումներ մասնագիտության ընտրության հարցում, սակայն պարզվում է, որ 12-րդ դասարանում նրանք առավել քիչ ժամանակ ունեն և չեն կարողանում առավել հստակ, ճիշտ հիմնավորել իրենց մասնագիտական ընտրության փաստը, որի պատճառով էլ հանգել են այդ պատասխանին: Այս հարցը ևս մտահոգիչ է, քանի որ սովորողներին չի տրամադրվել համապատասխան մասնագիտական օգնություն:

Այսպիսով, ավագ դպրոցում սովորողների հետ անցկացված հետազոտությունների արդյունքում պարզեցինք, որ մասնագիտությունները սովորողներն ընտրում են հաշվի չառնելով հասարակական պահանջները, իրենց առողջական վիճակը և այլն:

Հիմնականում ընտրության դրդապատճառներն են ծնողների խորհուրդները, մասնագիտության ընդունվածությունը հասարակության

մեջ և բարձր վարկանիշը: Ինչպես վկայում են մեր գրույցները սովորողների հետ, շատ հաճախ նրանց հետաքրքրությունները նույնպես հաշվի չեն առնվում: Այս ամենը վկայում է այն մասին, որ դպրոցներում չի կարևորվում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների նպատակաուղղված գործընթացը սովորողների հետ և առաջ է գալիս անհրաժեշտություն դպրոցներում, հատկապես ավագ դպրոցում կազմակերպել և անցկացնել մասնագիտական կողմնորոշմանն ուղղված համալիր աշխատանքներ:

Ստացված արդյունքների հիման վրա անհրաժեշտ է կազմել մասնագիտական կողմնորոշման համար անհրաժեշտ հատուկ ծրագիր:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ատենախոսության հիմնախնդրի հանգամանալից ու խորը ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց հետևյալ **եզրակացությունների**.

1. Ժամանակակից մանկավարժական հետազոտություններն ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրում են այդ խնդրի որևէ մի կողմը: Մինչ այսօր չկա ամբողջական, համապարփակ հետազոտություն ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման համալիր աշխատանքների կազմակերպման և իրականացման վերաբերյալ, հաշվի առնելով մեր հանրապետության սոցիալ-մշակութային պայմանները:

2. Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետությունը պահանջում է այդ աշխատանքների իրականացում սովորողների մանկավարժահոգեբանական ախտորոշման տվյալների հիման վրա:

3. Մասնագիտական կողմնորոշման տեսական և մեթոդաբանական հիմունքների առանձնացումը թույլ է տալիս վերհանել կարևոր և բազմազան խնդիրներ այդ ոլորտում, որոնց լուծումները կնպաստեն մասնագիտական կողմնորոշման հետագա զարգացմանը մեր հանրապետությունում:

4. Առանձնացված, բացահայտված են մասնագիտական կողմնորոշման աշխատանքների բնորոշ սկզբունքները, մեթոդները, ձևերը, որոնք նպաստում են մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

5. Ուսումնասիրվել են հոգեբանամանկավարժական տեսություններ, արժեքային մոտեցումներ անձի զարգացման

վերաբերյալ, վերլուծվել և բացահայտվել է սովորողի անձի կարևոր դերը և նրա մասնակցության անհրաժեշտությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կառավարման համակարգում:

6. Վերլուծվել և հիմնավորվել է դպրոց-ընտանիք, դպրոց-գործատու համագործակցության անհրաժեշտությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում: Այդ համագործակցությունը ոչ միայն բարձրացնում է այդ գործընթացի արդյունավետությունը, այլ նաև օգնում է աշակերտներին ճիշտ ընտրել մասնագիտություն, հաշվի առնելով հասարակական պահանջները:

7. Մասնագիտության ճիշտ ընտրության համար անհրաժեշտ է հաշվի առնել դեռահասի և ավագ դպրոցականների հոգեֆիզիոլոգիական և անհատական առանձնահատկությունները:

8. Անցկացված սոցիոլոգիական հարցումներն ավագ դպրոցի մանկավարժների և սովորողների շրջանում թույլ տվեց կոնկրետ փորձարարական նյութի հիման վրա բացահայտել իրենց գիտելիքները մասնագիտական կողմնորոշման աշխատանքների վերաբերյալ և ցույց տալ աշակերտների կողմից մասնագիտության ընտրության հիմնական պատճառները:

9. Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծության ընթացքում բացահայտվեց, որ մասնագիտության ընտրության հարցում հաշվի չեն առնում աշակերտների հետաքրքրությունները, անհատական առանձնահատկությունները և հասարակական պահանջները:

10. Սոցիոլոգիական հարցումները հաստատեցին դպրոց-ընտանիք-գործատու համագործակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև ապագա մանկավարժներ պատրաստելու ընթացքում մանկավարժական բուհերում «Մասնագիտական կողմնորոշման» դասընթացի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

11. Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ճիշտ և արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է կիրառել մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համալիր ծրագիր:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Ն. Չախոյան, Վ. Ֆ. Գրիգորյան, Մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգը հանրակրթական դպրոցում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու,

1-ին պրակ., Երևան, «Մանկավարժ.» հրատ., 2013թ., էջ 298-302:

2. Ն. Չախոյան, Մասնագիտական լուսավորումը և խորհրդատվությունը որպես մասնագիտական կողմնորոշման համակարգի բաղադրամասեր, “Модернизация образования в контексте современных педагогических парадигм”, сборник научно-образовательных докладов и статей, Ереван, АГПУ, 2014г.ст.253-257:

3. Ն. Չախոյան, Ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համալիր ծրագիր, «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոդվածներ, Վանաձոր, 1/40/, 2014թ., էջ145-152:

**ЧАХОЯН НАРА СТАФИКОВНА**  
**ПРОБЛЕМА ПРОФЕССИОНАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ**  
**СТАРШЕКЛАССНИКОВ В СОВРЕМЕННОЙ ШКОЛЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 «Теория и история педагогики».

Защита диссертации состоится 12 декабря 2014 года в 14<sup>00</sup> на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК.

Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52<sup>а</sup>, корпус факультета армянской филологии ЕГУ, 203 аудитория.

**РЕЗЮМЕ**

**Актуальность темы.** Сегодня в результате модернизации образования произошли изменения в структуре и содержании общего образования, определились стремления у учащихся к приобретению новых знаний, качеств для усвоения научно-технических и социально-экономических новшеств. Рост требований к профессиональной подготовке кадров, конкуренция на рынке труда, противоречие между индивидуальными особенностями учащихся и выбором профессии, а также усиление влияния различных социальных институтов обосновывают и более актуальным делают необходимость исследований по проблеме профориентации учащихся в школе.

Эта проблема становится наиболее актуальной в старшей школе, потому что именно в старшей школе важнейшей задачей является сознательный выбор будущей профессии, возрастает значимость работ по профориентации учащихся и роль, активность различных социальных институтов. Следовательно, приобретает важность необходимость организации комплексных, целеустремленных работ по профориентации учащихся старшей школы со стороны педагогов.

**Цель исследования** - изучение проблемы по профессиональной ориентации учащихся старшей школы, рекомендации и обоснование путей решения этой проблемы.

**Научная новизна исследования.**

1. Изучены и проанализированы идеи, теории, понятия профориентации учащихся.

2. Изучены теоритические и методологические основы профориентации, выделены и научно обоснованы компоненты системы

профориентации.

3. Выделены существующие проблемы, которые требуют решения для дальнейшего развития профориентационного процесса.

4. Обоснованы принципы, методы, формы, присущие профориентации.

5. Определена и обоснована роль учащихся в управлении профориентационной деятельностью.

6. Проанализирована и обоснована роль сотрудничества школа-семья, школа-работодатель в системе профориентационных работ.

7. Проведен социологический опрос среди старшеклассников по выявлению проблем профориентационной работы, современного состояния этого процесса и путей решения выявленных проблем.

**Теоретическое значение исследования** обусловлено дальнейшим развитием педагогической науки, новыми подходами к целям, задачам, принципам, профориентации, которые значимы с точки зрения развития педагогической теории.

**Практическое значение исследования.** Теоретические положения, результаты и заключения могут стать источником для учебных пособий, методических руководств, которые могут эффективно применяться при подготовке, переподготовке кадров по профориентации, для практической деятельности и научных исследований.

Предложенная комплексная программа может быть успешно применена в старшей школе с целью профориентации учащихся.

Исследовательская работа полезна также родителям, работодателям.

**Структура о объем диссертации.** Диссертация состоит из 170 страниц. Она состоит из введения, 3 глав, заключения, списка использованной литературы и приложений.

## CHAKHOYAN NARA STAFIK

### THE ISSUE OF SENIOR STUDENTS' PROFESSIONAL ORIENTATION IN CONTEMPORARY SCHOOLS

Pedagogical sciences candidate thesis on the specialty 13.00.01-“Theory and history of pedagogics”

The defense of the dissertation will be held at 14<sup>00</sup>, on December 12, 2014, at the Yerevan State University.

Address: 0025, Abovyan str. 52<sup>a</sup>, Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room 203

#### SUMMARY

**The relevance of dissertation theme.** Nowadays structural and meaningful dispositions and alternations are seen in the process of general education improvements, where learners' desire of gaining new knowledge, the quality of scientific engineering and socio-economical importations comprehension?, learners' professional orientation and the attitude towards free and creative jobs are emphasized.

The growth of contemporary demands in the field of professional training of specialists, the existence of job market, the discrepancy of learners' individual peculiarities and the choice of profession, the influence of other social institutions base and modify the necessity to study issue of learners' professional orientation at school.

**The problem gains** more importance at High Schools, because the realized choice of profession, the purposeful work leading to learners' professional orientation, the role and activity of other social institutions are more urgent at High Schools. Thus, the contemporary High School professional-teachers' overall and organized work is of paramount importance.

**The aim of the research** is to study the learners' professional orientation issues, to designate them and base the ways of their solutions.


**The scientific novelty** of the research is determined by the scientific and methodological bases of professional orientation and their structure. It is deciphered and systematized more profoundly in the contemporary conditions of pedagogical theory and in the process of organizing education. We have clarified the aim of the professional orientation, its problems and principles, we have based their place and

role in raising the efficiency of teaching and educational processes and also in the teachers' training process.

**The theoretical value** of the research is conditioned by the practical development of pedagogics via new approaches towards the aims, problems and principles of senior students' professional orientation, which are valuable for the further development of pedagogics. The research can be applied in "Professional Orientation" study as well as for jobs in professional orientation centers.

**The practical significance** of the research is that the main results of the investigation can become a guidebook for those who are involved in pedagogics, for researchers, for different professionals who are concerned with the issue of professional orientation. The research is also important for parents, learners and employers. The research will help the teachers of High Schools to change their methodology, to lead different researches on the issue of revealing different sides of professional orientation and to design and carry out teaching and educational activities on the bases of the achieved results. The overall plan of professional orientation of senior students can also be usefully used by different specialists of High Schools.

**The thesis** consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and an appendix.

A handwritten signature in black ink, appearing to be 'D. M. M.', with a large, stylized flourish extending upwards and to the right.